

ԲԱՅՅՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԱԶԳԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԸՆԿԱՎՄԱՄԲ
(1880—1910-ԱՎԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

ԼԵՎՈՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Րաֆֆու հայրենասիրական վեպերը մեծ նշանակություն են ունեցել հայերի ազգային գիտակցության հաստատման, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության ձևավորման և տարածման գործում: Դրանք դարձել են «կյանքի դասագիրք» հայ հասարակության և երիտասարդության մի քանի սերունդների համար: Իսկ ի՞նչ գործառույթուն ունեն Րաֆֆու ստեղծագործությունը օտար ընթերցողների շրջաններում: Թվում է, թե այդ խնդրի քննարկման համար բավականաչափ նյութ չկա: Սակայն պատահական չէ, որ ժամանակակիցները գրողի վաստակը գնահատելիս իրավացիորեն նշում էին. «Եվրոպացի ազգերը մի անգամ ևս իմացան, որ հայ ազգը ունի ընտիր բանաստեղծներ և Րաֆֆու շնորհիվ ծանոթացան մեզ հետ»¹:

Ի՞նչ ազդեցություն էր թողնում Րաֆֆու ստեղծագործությունը օտարազգի ընթերցողի վրա և ո՞րն էր դրա առանձնահատկությունը: Դա ավելի հասկանալի կդառնա, եթե վերհիշենք Ֆր. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ֆրանսուհի հերոսուհու խոսքերը. «— Հին ժողովուրդ եք,— բորբոքվեց նա,— լավ: Քաղաքակիրթ ժողովուրդ եք: Չեմ ժխտում: Բայց թե ինչո՞վ կապացուցեք, որ այդպիսին եք: Գիտեմ, իհարկե, անուններ կթվեք, որ ես ամեն օր ստիպված եմ լսել՝ Արովյան, Րաֆֆի, Միամանթո: Բայց ո՞վ է ճանաչում այդ մարդկանց: Ձեզանից բացի, աշխարհում ոչ ոք նրանց մասին չգիտե՞ք»²:

Հերոսուհին այստեղ, իհարկե, իրավացի չէ հայ հեղինակների՝ աշխարհին բողոքովին անհայտ լինելու վերաբերյալ: Դրա վկայությունը կարելի է համարել հենց միայն այն փաստը, որ այս մեջբերումը կատարվում է ավստրիացի գրողի ստեղծագործությունից: Բայց կարևորը դա չէ: Հետևենք Վերֆելի հետագա մտորումներին: Նրա հերոսուհին հաշտվում է այն բանում, որ նրանք չունեն այնպիսի գրողներ, ինչպիսիք Եվրոպայում հայտնի Քաթոլ Մենդեսը և Պիեռ Լոթին են: Այս պերճախոս հակադրությունը պատահական չէ: Ժուլիեթի կարծիքով, դարասկզբի եվրոպացու համար ո՞ր հեղինակներն են հետաքրքիր, ո՞ւմ է նա բերում որպես օրինակ, որ հակադրի հայ հեղինակներին: Քաթոլ Մենդեսին՝ հոգեկան ախտաբանական երևույթներ պատկերող վեպերի և Փարիզյան կոմունան վարկաբեկող մի գրքույկի հեղինակի, Պիեռ Լոթինին՝ գրական նոր ժանրի, այսպես կոչված, «գաղութային վեպի» ստեղծողին: Բնական է, որ այդպիսի գրականության երկրպագուներին չէր կարող հետաքրքրել հայրենասեր հայ գրողների ստեղծագործությունը: Ժուլիեթին չի հուզում նաև հայկական «Ձախորդ օրերը» երգը: Նա, ինչպես գրում է Վերֆելը, «ուզում է բորբոքուն երգ լսել, այնպիսի մի բան, որ ոչ մտատանջություն պատճառի, ոչ էլ վերաբերի ուսյալ կամ անկիրթ ցեղերին»:

Վերֆելը ըստ էության մեզ ներկայացնում է եվրոպացի ընթերցողի երկու հնարավոր վերաբերմունք Րաֆֆու ստեղծագործության նկատմամբ: Մեկը՝ «կրթված քաղքենու» անտարբեր, արհամարհող, իսկ մյուսը հենց իր՝ Վերֆելի, խորապես հարգալից, համակրական վերաբերմունքն է: Եվ իսկապես՝

1 Օ. Քանդյանց, Մի քանի խոսք Րաֆֆի նշանակության մասին («Արաբ», 1932, Գ. Ա, էջ 109),

2 Ֆրանց Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964, էջ 185:

Վերֆելի, Յու. Վեսելովսկու, Մ. Դորկու, Վ. Բրյուսովի, Ա. Լայսթի նման հումանիստ գրողները, քննադատներն ու հասարակական դործիչներն էին, որ բարձր էին գնահատում ու պրոպագանդում Բաֆֆու հայրենասիրական երկերը: Նրանց համար Բաֆֆու ստեղծագործությունն ինքնամիտոյ արժեք չէր: Թարգմանելով նրա գործերը, պատմելով նրա անձնավորության ու գործունեության մասին, նրանք ընթերցողներին ծանոթացնում էին հայ ժողովրդի իրավիճակին, նրա ողբերգական ճակատագրին ու հերոսական պայքարին: Եվ դա բնական էր, քանի որ Բաֆֆին անխզելիորեն միաձուլված էր իր ժողովրդի ճակատագրին, կյանքին ու ձգտումներին, և անհնար էր նրա ստեղծագործությունը գնահատել այդ ամբողջությունից դուրս: Այդ հարցին ճիշտ այդպես էին վերաբերվում նաև Բաֆֆու ստեղծագործության հայ ջատագովները: Նրանք օգտագործում էին գրողի անունն ու երկերը, ամեն մի հնարավորություն, որպեսզի համաշխարհային հասարակությանը ծանոթացնեն հայ ժողովրդի ներկա վիճակին ու ձգտումներին: Ահա, օրինակ, գրողի մահվան 25-ամյակի առթիվ Լոնդոնի միջոցառումներ նախապատրաստող հանձնաժողովի մի հատկանշական հայտարարություն. «Ամեն միջոց ձեռք առնված է հետաքրքրելու Անգլ. վարիչ շրջանակները և մամուլը այս առթիվ ծանոթացնելու Բաֆֆին և հայու ոգին»³:

Բաֆֆու երկերի, ինչպես նաև Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Ռ. Պատկանյանի պոեզիայի և այլ գրողների հայրենասիրական գործերի բնույթը յուրահատկություններից մեկն այն է, որ դրանք անմիջականորեն հասցեագրված են հայ ընթերցողին, շոշափում են խիստ արդիական և առանձնահատուկ ազգային խնդիրներ: Ինքնին հասկանալի է, որ դա չի նշանակում, թե այդ գործերը զուրկ են «հավերժական» կամ համամարդկային բովանդակությունից, շունեն գեղարվեստական օբյեկտիվ արժանիքներ: Այդ ամենը տվյալ երկերում անկասկած առկա է, բայց նշված յուրահատկությունը պայմանավորել է նաև դրանց ընկալման առանձնահատուկ բնույթը: Այս հարցում միանգամայն ճիշտ է Վ. Բրյուսովի գնահատականը, որ ուղղված էր Ռ. Պատկանյանի պոեզիային. «Պատկանյանի պոեզիայի նշանակությունը ոչ հայ ընթերցողը դժվար կարող է լիովին գնահատել»:

Այդ հայրենասիրությունը գործոն է, պարտավորեցնում է ոչ թե անդամ հիացմունքների, այլ վճռական արարքների: Դա մի սեր է, որ աշխուժացնում է ուրիշներին, իսկ բանաստեղծին հնարավորություն է տալիս նոր ուժեր բխեցնելու իրենից: Սակայն իհարկե պետք է լինես ջո ժողովրդի դավակը, որպեսզի լիովին հասկանաս այն հզոր սպավորությունը, որ պետք է առաջացնի այդպիսի սիրո ուժով համակված պոեզիան...»⁴:

Եթե նույնիսկ ոչ «լիովին», այդ սիրո ուժն, այնուամենայնիվ, զգացվել է նաև ո՛չ միայն հայերի կողմից: Դա արտահայտվեց դեռևս Բաֆֆու թարգման ժամանակ, որին մասնակցեցին Թիֆլիսի նաև վրաց և ռուս մտավորականության ներկայացուցիչները: «Իվերիա» թերթն այդ օրերին գրեց. «Մարդ երկու անուն պիտի ունենա,— ասում է վրացին,— մինն այստեղ է մնում, մյուսն իր հետ է տանում: Դու այդ երկուսն էլ ունեիր, և ջո հայրենակիցները քեզ հետ հեռացող անվան հետ միասին ճամփեցին ձեռագործ, ձեռքով շինած անցողական պսակներ, իսկ մյուսը՝ նորը, այստեղ մնացողը հյուսեցին իրենց սրտի

³ «Տարազ», 1908, № 5—6, էջ 1:

⁴ Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 114—115: Ի դեպ, Վ. Բրյուսովը լավ ծանոթ էր «Վայժեր» վեպին, որով նա հայերեն է սովորել, Պ. Մակինցյանը, որը Բրյուսովին ծանոթացնում էր հայոց լեզվին ու մշակույթին, Վ. Տերյանին սզղած իր նամակում վեպի այս գործառություն մասին հաղորդում է հետևյալը. «Վայժերը սկսել ենք կարդալ: Իմ սխառնը ուղղակի սքանչելի է: Կսովորի անպայման» («Брюсовские чтения 1966 г.», Ереван, 1967, с. 114):

մեջ անձեռագործ պսակով, որը ոչ անցնում է և ոչ թառամում: Ի՞նչ է այս, եթե ոչ անմահություն»⁵:

Րաֆֆու մահը ազդակ հանդիսացավ, որ ուսական մամուլը նույնպես անդրադառնա նրա անհատականությանն ու ստեղծագործությանը: Թաղման ակնատես Ծ. Դ-վինան⁶ ուսու հասարակությանը ծանոթացնելով Րաֆֆու ստեղծագործությանը, գրում է. «Նրա գրեթե բոլոր վեպերը նվիրված են արևմտահայերի ազատագրման կոչին, հոգեպես, անկասկած, մի ուժեղ ժողովրդի, որը, չնայած թուրքական 500-ամյա անողորմ, գազանային լծին, կարողացավ անձեռնմխելի պահել իր ազգային իդեալները»: Հողվածի հեղինակը նշում է, որ Րաֆֆուն մեծ սիրով ընթերցել են նաև «ամանր առևտրականները, շրջավաճառները, հասարակ ժողովուրդը: Նրա վեպերը հայրենիքի, հասարակ ժողովրդի նկատմամբ դրսևորված վառ սիրո արտահայտություններ են»⁷:

«1880 թ. դեկտեմբերի 11-ը.— գրում է Յու. Վեսելովսկին,— հիշարժան տարեթիվ է ուսու հասարակությանը հայերի և նրանց ստեղծագործության հետ ծանոթացնելու պատմության մեջ: Այդ օրը Մոսկվայի համալսարանի լսարաններին մեկուսի տեղի էր ունենում Ռուսական բանավետի սիրահարների ընկերության հնագույն ուսական գրական ընկերության նիստը... Բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ ընթերցվեց Ծ. Նեկրասովայի «Հայ նոր գրականություն. Սունգուկյանի «Քանդած օջախ» կատակերգությունը. գրող Րաֆֆի» ակնարկը»⁸: Ծ. Նեկրասովան, որ ուսումնասիրել է Գերցենի և Օգարևի գրական գործունեությունը և գերմաներենից ուսերեն թարգմանել Րաֆֆու «Հարեմը» և «Խաս-Փուլը», 1892 թ. հրատարակեց «Հայ գրող Րաֆֆի» ակնարկը⁹: Նա իր հողվածում ուսու ընթերցողին պատմում է հայերի մասին և խոստովանում, թե նրանց վերաբերյալ «մենք ոչինչ չգիտենք»: Րաֆֆուն նա բնութագրում է որպես «նորագույն շրջանի ամենակարկառուն գրողի, ոչ միայն բարբերի ճշմարտացի պատկերողի, այլև իսկական արվեստագետի»: Հատկապես նա առանձնացնում է նրա «Խենթը» և «Կյածերը»: Ընդհանուր ըմբռնելով հայ գրողի ստեղծագործության դերն ու նշանակությունը, նա գրում է. «Իր բոլոր ստեղծագործություններում Րաֆֆին հանդես է գալիս որպես ուսուցիչ, իր ժողովրդի դաստիարակ... Իսկ պայքարը՝ չարիքի դեմ պայքարը, իր բոլոր դրսևորումներով, հայ վիպասանի նշանաբանն է»¹⁰:

Տասնամյակներ շարունակ Րաֆֆու ստեղծագործության եռանդուն մասսայականացնողներին մեկը եղել է Յու. Վեսելովսկին: Նրա՝ դեռևս Մ. Բերբերյանի հետ համատեղ պատրաստած «Հայ բելետրիստներ» (1893) ժողովածուի առաջին հատորի գրեթե 250 էջը (գրքի կեսը) հատկացված է Րաֆֆու ստեղծագործությանը: «Ներկա ժողովածուի նպատակն է,— գրում է Վեսելովսկին,— ուսու հասարակությանն օգնել ծանոթանալու հայ արձակագրությանը և դրա միջոցով հայ կյանքին»¹¹: Այդ տեսանկյունով է գրված նաև Յու. Վեսելովսկու հետաքրքիր ակնարկը Րաֆֆու ստեղծագործության մասին: Նա Րաֆֆուն համարում է «հայ ազգի պարծանքը»՝ նշելով այն կարևոր հանգամանքը, որ նա հանդիսանում է «հայ առաջին պրոֆեսիոնալ գրողը»: Յու. Վեսելովսկին խոստովանում է, թե Րաֆֆու երկերը իրեն այնքան են հուզում, որ «մեր օրերում հազիվ թե հնարավոր է կատարելապես հանգիստ, օբյեկտիվ քննադատություն»: Հատկապես բարձր գնահատելով «Ջալալեդդի-

⁵ Տե՛ս Ի. Բեգլարյան, Րաֆֆին և վրաց հասարակությունը, «Խորհրդային Վրաստան», 1939, № 250:

⁶ Ն. Մելիքսեթյանը պարզել է, որ դա ուսու գրող Ծ. Դուբրովինայի ծածկանունն է (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972, № 2):

⁷ «Петербургская газета», 1888, № 138:

⁸ «Армянский вестник», 1916, № 4, с. 6:

⁹ «Мир божий», 1892, № 7, с. 1—14:

¹⁰ Նույն տեղում, էջ 3:

¹¹ Ю. Веселовский, Раффи («Армянские беллетристы», М., 1893, с. 89):

ներ», «խենթեր» և «Կայծերը», նտ գրում է. «Բայց Րաֆֆու գաղափարամետ երկերից ավելի կարևոր նշանակություն ունեն այն գործերը, որոնց մեջ նա հանդես է գալիս որպես արևմտահայության պաշտպան և նրանց տխուր ճակատագրի տաղանդավոր դեղագիր: Դուցե և կգա մի օր, երբ կմոռացվեն կամ ոչ լինվին կգնահատվեն Րաֆֆու բոլոր մյուս ծառայությունները, բայց ժողովրդի հիշողության մեջ միշտ կմնա կեղծբոված ազգակիցների նրա եռանդագին պաշտպանությունը»¹²: Խոսելով ռուս ընթերցողի համար Րաֆֆու վեպերի նշանակության մասին, հոդվածի հեղինակը վստահորեն գրում է. «Ժամանակի ընթացքում հայ գրողի բոլոր գլխավոր գործերը, անշուշտ, կթարգմանվեն ռուսերեն»¹³:

Յու. Վեսելովսկու այս հոդվածը, ինչպես և ամբողջ ժողովածուն, հասցեագրված էր ռուս հասարակության լավագույն մասին և ըստ արժանավայել գնահատվեց վերջինիս կողմից: Բայց Ռուսաստանում կային և այլ ուժեր, որոնք այնքան էլ համակրանքով չընդունեցին Վեսելովսկու գործը: Գրա հետևանքով ժողովածուի երկրորդ հատորը, որը, ինչպես գրում է Վեսելովսկին, «զգալի քանակությամբ միտումնավոր և մարտական նյութեր» էր պարունակում, արգելվեց: Այո՞, մինչ Րաֆֆու վեպերը ճանապարհ էին հարթում դեպի ռուս ընթերցողը, դրանք պետք է հաղթահարեին պաշտոնական իշխանության և առաջին հերթին՝ գրաքննության ստեղծած խոչընդոտները: 1889 թվականին գրաքննիչ Գր. Կարախանովը Կովկասյան գրաքննչական կոմիտեին ուղղված իր զեկուցագրում գրում է. «Գաղափարները, որ իր երկերում այդպես տաղանդավոր կերպով զարգացնում է Րաֆֆին, չեն կարող բոլորովին օտարոտի մնալ ռուսահայերի համար, թեկուզ միայն շնորհիվ վերջիններիս կարեկցանքի՝ դեպի իրենց թուրքահայ եղբայրները, որոնք ենթարկվում են աղետների ու հալածանքի: Րաֆֆու գիրքը մեծ հաջողություն է վայելում այստեղի հայ մտավորականության շրջանում... Այնինչ նրանում շարադրված գաղափարների տարածումը երբեք չի կարող համընկնել մեր կառավարության նկատառումների հետ, և այդ պատճառով անհրաժեշտ է թվում Րաֆֆու երկերը շտարածել երկրամասի հայ ազգաբնակչության շրջանում»¹⁴:

Այսպես, գրաքննությունը ձգտում էր դադարեցնել Րաֆֆու երկերի հասարակական լայն գործառնությունը: Բայց, հասկանալի է, նախ նա ի որոու չէր այդ խնդիրն իրագործելու և երկրորդ՝ «կառավարության նկատառումները» ևս փոփոխվում էին: Բոլոր դեպքերում Մոսկվայի, Պետերբուրգի, Քիֆլիսի ռուսական մամուլում ամեն հարմար առիթով տպագրվում էին հոդվածներ Րաֆֆու մասին կամ էլ՝ նրա գործերի թարգմանությունները: Հետաքրքիր է, որ 1890—1910 թվականների ընթացքում ռուս քննադատության՝ Րաֆֆուն տված գնահատականները գործնականում չէին փոխվում: Հենց այդ պատճառով, մի կողմ թողնելով Րաֆֆու վեպերի ինքնին հետաքրքիր բազմաթիվ բնութագրումները¹⁵, անդրադառնանք միայն «Արմյանսկի վեստնիկ» հանդեսի համապատասխան նյութերին, որոնք կարելի է դիտել որպես նախասովետական շրջանի ռուս քննադատության՝ գրողի ընկալման բարձրակետն ու ամփոփումը:

10-ական թվականներին, ստեղծված հանգամանքների բերումով, Րաֆֆու վեպերը կարծես ապրում են իրենց երկրորդ ծնունդը. նրանք հնչում են առանձնակի հրատապությամբ և ընկալվում առավել սրությամբ: Անկասկած, հենց այդ պատճառով «Արմյանսկի վեստնիկը» որոշում է հատուկ հոդված նվիրել Րաֆֆու մահվան 28-ամյակին: Հոդվածի հեղինակը կրկին Յու. Վեսելովսկին էր, և հետաքրքիր է 1916-ին արտահայտած նրա մտքերը համեմատել համարյա 25-ամյա վաղեմություն ունեցող նրա նախորդ հոդվածում արտահայտված

¹² Նույն տեղում, էջ 98:

¹³ Նույն տեղում, էջ 103—104:

¹⁴ Տե՛ս Մ. Գ. Նեբրսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 483:

¹⁵ Տե՛ս, օրինակ, «Кавказский вестник», 1901, № 1; «Кавказские альманахи», 1913:

տեսակետների հետ: Հայ ժողովրդի համար ծանր այն օրերին նշանակալից է հնչում արդեն իսկ հողվածի խորագիրը՝ «Րաֆֆին որպես լավագույն օրերի կանխագուշակ»: Հայացք ձգելով հայ ժողովրդի պատմության ու գրականության վրա և հիշատակելով ի. Աբովյանին ու Ռ. Պատկանյանին, Յու. Վեսելովսկին գրում է. «Մեծ ցնցումների ժամանակաշրջանում, նոր, ավելի երջանիկ ու ուրախալի ժամանակների նախօրեին միշտ հիշատակվում են այն մարդկանց անունները, ովքեր շատ վաղ են կանխատեսել այդ նոր ժամանակը, ճանապարհ են հարթել և հող նախապատրաստել գործիչների ու մարտիկների ապագա սերունդների համար... Եվ զոհվածների հիշատակը հզոր խթան է դառնում, որ մղում է ավելի եռանդագին ու միահամուռ պայքարի՝ լավագույն րբերի համար»¹⁶: Յու. Վեսելովսկին գտնում է, որ իրականությունից վերցրած Րաֆֆիական հերոսները գեղարվեստական առումով առավել կենդանի և հաջողված են, բայց դրական հերոսները, շոտոնց հանդես գալը վիպասանը համարել է անհրաժեշտ՝ թուրքահայոց կյանքը առաջ շարժելու, դարավոր անշարժությունից, հնազանդությունից ու լուսնությունից դուրս բերելու համար, պետք էին Րաֆֆուն, որի մեջ երբեք չէին մեռնում քարոզիչը, ազգային գործիչը և հրապարակախոսը: Նրանց շուրթերով գրողն իր ժողովրդին նոր խոսք սասաց և առաջ ընկավ իր ժամանակներից՝ ստեղծելով հաճախ այնպիսի պատկերներ, ինչպիսիք դեռ հնարավոր չէր նկատել թուրքահայոց իրական կյանքում»¹⁷:

Յու. Վեսելովսկին ընդգծում է, որ «Կայծեր» վեպում ներկայացված ծրագիրն իրականացվեց կյանքում, և նրա հետևանքները երևում են ամենուրեք: «Եթե մեր աչքի առաջ թուրքահայերը... հերոսաբար նետվում են մարտի՝ հայրենիքի դարավոր թշնամու դեմ, եթե զինվորների մեջ արթնացել էր նախնիների հին քաջարի ոգին..., ապա ինչպե՞ս չհիշել այն մարդուն, որը վաղուց ի վեր երիտասարդության մտքերի տիրակալն է եղել և շատ բաներ այնպես ճիշտ է կանխատեսել և գուշակել, որ նրա երկերի մեջ որոշ մտքեր թվում են մարգարեական»¹⁸:

Այդ շրջանում Րաֆֆուն նվիրված նյութերից անհրաժեշտ է առանձնացնել «Րաֆֆին և Անդրանիկը» հոդվածը, որ նույնպես հրատարակվել է «Արմյանսկի վեստնիկ» ամսագրում: Հեղինակը (Ռ. ստորագրություն) հողվածի սկզբում իրավացիորեն գրում է, որ «մեզանում գրականությունը և ինքնապաշտպանությունը հարազատ քույրեր են, որ մեզանում սուրն ու գրիչը գործել են զուգահեռաբար: Դրանում է թաքնված այն բանի պատճառը, որ մեր հայտնի գրողների և ժողովրդական հերոսների անունները սերտորեն միահյուսված են. չէ՞ որ վերջիններս իրենց գործունեության մեջ իրագործում են առաջինների իդեալները»¹⁹: Շարունակելով այդ միտքը, հեղինակը պատկերավոր ձևով եզրակացնում է. «Րաֆֆին հայ ժողովրդի արթնացող միտքն է, իսկ Անդրանիկը՝ նրա գործող ուժը»: Հեղինակը Րաֆֆուն անվանում է «մեր ազատագրական գաղափարների հանձարեղ տարածող», «մեր ժողովրդի ցասումնալից բողոքի խորհրդանիշ», «ժողովրդական մարգարե»:

Բնութագրելով «Կայծեր» վեպը, հեղինակը նշում է, որ նրա հերոսներին կարելի է բաժանել երկու խմբի՝ մտավորականներ (Կարո, Ասլան, Սազո) և մարտիկ-հեղափոխականներ (որսորդ Ավոն և նրա ընկերները): «Այս վերջինների և Վանի, Սասունի, Տարոնի հերոսական պաշտպանների միջև կա ոչ միայն նմանություն, այլև նույնություն: Կարծես հարուստ են առել Րաֆֆու հերոսները», — ոգեշնչված նշում է հեղինակը: Հիշատակելով հերոսների անունները և դրանց մեջ՝ Աղբյուր Սերոբին, Գևորգ Չաուզին և այլոց, հեղինակը նկատում է, որ թեև նրանք ընկան ազատության համար մղվող անհավասար պայքարում, բայց նրանց մահով չմարեցին Րաֆֆու «կայծերը», հայտնվեցին

16 «Армянский вестник», 1916, № 12—13, с. 2.

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում, էջ 4:

նոր հերոսներ և դրանց մեջ՝ Անդրանիկը: «Անդրանիկը որսորդ Ավոն է, որը հրքեք չի մեռնի, քանզի անմահ է Բաֆֆին»:

Ինչպես տեսնում ենք, ռուսական մամուլում հրատարակված նյութերը ոչ միայն վկայում են օտարազգի հասարակության՝ Բաֆֆու ստեղծագործությանը ծանոթ լինելու, այլև վերջինիս նշանակության խոր գիտակցման մասին, որը էպոսի լրացնում է նրա պատմագործառության ընդհանուր պատկերը: Այդ գործառությունը ավելի պետք է ընդլայնվեր այն բանից հետո, երբ Վ. Տերյանը Գորկու հանձնարարությամբ թարգմանեց «Կայծերի» առաջին հատորը: Սակայն վեպի ռուսերեն հրատարակությունն այդ տարիներին չիրականացավ:

Այն իրողությունը, որ Բաֆֆու ստեղծագործությունը կարող է ճիշտ հասկացվել և հուզել ոչ միայն հայ ընթերցողին, վկայում է Ամերիկայում տեղի ունեցած միջադեպը, որի մասին պատմում է գրողի որդին՝ Արամ Բաֆֆին. «Քոլեջներից մեկի պրոֆեսորը նկատում է, որ իր հայ ուսանողները շատ են «տարված» «եսենթ» անվամբ մի գրքով. վախենալով, որ այդ գիրքը բոլորովին խենթացնե ղրանց, մտածում է միջոցներ ձեռք առնել. բայց նախ ուզում է գիտնալ գրքի ինչ լինելը, ուստի թարգմանաբար կարդացնել է տալիս «եսենթը», որի արդյունքն այն է լինում, որ ոգևորված օտարազգին ասում է հայ ուսանողներին. «Այդ գիրքն ինձ էլ է խենթացրել...»²⁰:

Բերված փաստերն ու դատողությունները հնարավորություն են ընձեռում լայնացնել պատկերացումները Բաֆֆու ստեղծագործությունների պատմական նշանակության մասին, վեր հանել դրանց պատմական կյանքի նոր կողմերը:

ТВОРЧЕСТВО РАФФИ В ВОСПРИЯТИИ ИНОЯЗЫЧНЫХ ЧИТАТЕЛЕЙ (1880—1910 гг.)

ЛЕВОН КАЗАРЯН

Резюме

Историческая жизнь литературной классики, ее восприятие и функционирование на разных этапах общественного развития все чаще привлекает внимание ученых. Творчество Раффи в этом плане представляет несомненный интерес. Оно не только сыграло выдающуюся роль в деле формирования национально-освободительной идеологии армян, но и способствовало пробуждению интереса к Армении, ее исторической судьбе и современному состоянию.

Историко-художественный материал свидетельствует о том, что несмотря на определенные различия в восприятии произведений Раффи армянским и иноязычным читателем, его идеи, освободительный пафос оказывали влияние и за пределами Армении.

²⁰ «Տարազ», 1908, № 5, էջ 36: